Վիվասել–ՄՏՍ–ը՝ Հայաստանին
VivaCell–MTS to Armenia **2011**



Կորպորատիվ պատասխանատվություն
# Corporate Responsibility



Հատոր
Edition 5

ՀՏԴ 654
ԳՄԴ 32.882
Վ669

Վիվասել-ՄՏՍ-ը` Հայաստանին
Վ669 Կորպորատիվ պատասխանատվություն
– Եր.: – «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ, 2011
Մաս 5. – 124 էջ

ՀՏԴ 654
ԳՄԴ 32.882

**ISBN 978-99941-2-621-7**
© «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ, 2011

Կորպորատիվ պատասխանատվություն

Corporate Responsibility



## Հարգելի՛ ընթերցող

Կորպորատիվ պատասխանատվության հանրային ընկալումը Հայաստանում փոփոխվում է: Օրեցօր ավելանում է այն ընկերությունների թիվը, որոնք գիտակցում են, որ կորպորատիվ պատասխանատվությունը ոչ թե բարի կամքի դրսևորում է, այլ` երկարաժամկետ ռազմավարական զարգացմանը միտված հստակ հաշվարկված պարտավորություն: Աճում է նաև սոցիալական ներդրումների միջոցով կայուն զարգացման ձգտող և ռացիոնալ ընտրություն կատարող ընկերությունների թիվը: Արդյունքում` աճի ու զարգացման հնարավորությունները հասու են դառնում հասարակության ավելի լայն շրջանի:

Կորպորատիվ պատասխանատվության շրջանակում իրականացվող գործունեությունը, սակայն, չի կարող սահմանափակվել միայն բիզնես–քաղաքացի նախաձեռնություններով. առողջ, կրթված և տեղեկացված մարդկային կապիտալը հիմնարար նախապայման է, սակայն բավարար չէ կայուն զարգացման համար:

Կորպորատիվ պատասխանատվության առանցքային բաղադրիչներից է ընկերության գործունեության սոցիալական, տնտեսական, էկոլոգիական ներազդեցությունը և պատշաճ կառավարման խրախուսումը բիզնես մակարդակում: Այդ մոտեցումը հայտնի է որպես «մատակարարման շղթայի կայուն զարգացում» և ենթադրում է աջակցություն, ուղղորդում և խրախուսում մատակարարներին: Դա երաշխավորում է նաև կայուն զարգացման պահանջներից բխող վարչարարություն` արտադրություն–մատակարարում գործընթացում:

Որքանո՞վ է մատակարարը կամ գործընկեր կազմակերպությունն աջակցում կամ հարգում իր աշխատակիցների` մարդու հիմնարար և աշխատանքային իրավունքները: Ինչպե՞ս են նրանք դիմակայում արտադրական ցիկլի բնապահպանական մարտահրավերներին: Խրախուսվում է, արդյո՞ք, շրջակա միջավայրի հանդեպ պատասխանատու մոտեցումը: Արտադրության մեջ կիրառվում են, արդյո՞ք, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներ և նյութեր: Նման հարցադրմամբ գործընկերներ ընտրելը կամ մատակարարներից համարժեք մոտեցում պահանջելը երաշխավորում է սեփական բիզնեսում պատասխանատու մոտեցում և ստանձնած պարտավորությունների լիարժեք կատարում:

Իրականում, նոր մոտեցումը նաև նոր մարտահրավեր է բոլոր մասնակիցների և շահագրգիռ կողմերի համար: Այն պահանջում է լայնախոհ վերաբերմունք և նոր բիզնես վարքագիծ. ավելի շատ ջանքեր և դրանք հաղթահարելու ավելի մեծ կամք: Սակայն անհրաժեշտ է նաև հիշել, որ բոլոր ջանքերը կարող են դրական արդյունք տալ, եթե համագործակցենք հանուն կայուն ապագայի:

**Ռալֆ Յիրիկյան**
**ՎիվաՍել–ՄՏՍ–ի գլխավոր տնօրեն**

## Dear reader

Public perceptions of the Corporate Responsibility in Armenia show signs of change: more companies understand – Corporate Responsibility is not an expression of goodwill but a commitment designed with accurate strategic vision of long-term development. More enterprises make the rational choice of securing sustainable perspectives of growth through social investments. The result is the increased accessibility to resources as well as emerging opportunities for growth and development for more segments of society.

However, the Corporate Responsible practices cannot be limited to business-to-people initiatives alone; and securing healthier, more educated and well informed human capital is a fundamental though not sufficient condition of sustainable development.

A key component of Corporate Responsibility is the conscientious management of social, economic, and environmental impacts of a company's activities and encouragement of good governance on business-to-business level – a management model known as the supply chain sustainability approach that includes assistance, guidance and incentives to suppliers to ensure sustainability of administration, production and provisioning of goods and services outsourced by the company.

Do the suppliers and partner companies support and respect basic human and labor rights of their employees? How do they face the possible environmental challenges of production cycles and do they promote environmental responsibility? Are environmentally friendly technologies and materials applied in production? Asking these questions when choosing new business partners or expecting such attitudes from suppliers, means making the next step in guaranteeing responsible attitudes of one's business and extending one's commitments with adherence to them on a wider scale.

Indeed, the new approach is a new challenge for all involved parties and stakeholders. It requires development of new attitudes and new business conduct, more efforts and more overcoming... But, surely, it is a rewarding enterprise, if we commit ourselves to collaboration for a sustainable future.

**Ralph Yirikian**
**VivaCell-MTS General Manager**

## Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ

«Դիջիթեք» ցուցահանդեսի հովանավորություն
ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար 22 նախագահի մրցանակի հովանավորություն
«Արմթեք» համաժողովի հովանավորություն
Միկրոէլեկտրոնիկայի օլիմպիադայի հովանավորություն
«ՏՏ ոլորտում լավագույն մենեջեր» մրցանակի հովանավորություն
Հայաստանի ռոբոտների բաց առաջնության հովանավորություն

## Information and Communication Technologies

Sponsorship of the Digitec Expo
Sponsorship of the Global IT Award of the President of the RA for Outstanding Contribution to Humanity through IT
Sponsorship of the ArmTech Congress
Sponsorship of the Microelectronics Olympiad
Sponsorship of the Best IT Manager Award
Sponsorship of Armenian Robots Open Championship

## Մշակույթ

«Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հովանավորություն
«Ազգային պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոնի հովանավորություն
Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հովանավորություն
Աջակցություն՝ «Սպեղանի» երգչախմբին
Գյումրիի «Վերածնունդ» միջազգային երաժշտական փառատոնի հովանավորություն
«Նոր անուններ» փառատոնի հովանավորություն
Աջակցություն՝ «Արս լունգա» դուետի՝ հայ կոմպոզիտորների գործերի կատարումների ձայնագրմանը
Աջակցություն՝ մշակութային կենտրոնների վերանորոգմանը և նյութական ապահովմանը
Վիգեն Չալդրանյանի «Ձայն լռության» ֆիլմի հովանավորություն
«Սայաթ-Նովա» մշակութային միության հովանավորություն
Պատկերապատման միջազգային փառատոնի հովանավորություն
Լիլիթ Պիպոյանի համերգի հովանավորություն
«Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնի հովանավորություն
Մշակութային օջախներում տեղեկատվական կրպակների տեղադրման հովանավորություն
Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հովանավորություն
«Վերադարձի» դասական երաժշտության փառատոնի հովանավորություն
Աջակցություն՝ Կոմիտասի անվ. լարային քառյակին
Երվանդ Քոչարի տուն-թանգարանի վերանորոգման հովանավորություն
Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական համույթի հովանավորություն

## Culture

Sponsorship of the Golden Apricot International Film Festival
Sponsorship of the National Gallery International Music Festival
Sponsorship of the State Philharmonic Orchestra of Armenia
Support to Speghani choir
Sponsorship of the Renaissance Gyumri International Music Festival
Sponsorship of the New Names Festival
Support to Duo Ars Lunga to record works by Armenian composers
Support to cultural centers renovation and material provision
Sponsorship of The Voice of Silence film by Vigen Chaldranyan
Sponsorship of Sayat-Nova Cultural Union
Sponsorship of the International Comics Festival in Armenia
Sponsorship of Lilit Pipoyan concert
Sponsorship of the Yerevan Perspectives International Music Festival
Sponsorship of installing information desks at cultural centers
Sponsorship of the State Youth Orchestra of Armenia
Sponsorship of the Return Classical Music Festival
Support to the String Quartet after Komitas
Sponsorship of renovation of Yervand Kochar Museum
Sponsorship of the Barekamutyun State Dance Troupe of Armenia

## Կրթություն

Աջակցություն` ՎիվաՍել-ՄՏՍ-ում Բեյրութի Հայկազյան համալսարանի և Լիբանանում գիտության և տեխնոլոգիայի ամերիկյան համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպմանը
Այց` Լիբանանի հայկական կրթօջախներ «ՎիվաՍել-ՄՏՍ` բիզնես, որն ունի առաքելություն» նախաձեռնության շրջանակում
Բաց դռների օրեր դպրոցականների համար` ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակում
Համագործակցություն` Հայաստանի 36 բուհի հետ
Համագործակցություն` «Օրրան» բարեգործական ՀԿ հետ
Աջակցություն` Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում կապի միջոցների, միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգերի ամբիոնի բացմանը
Հայաստանի բուհերի ուսանողների կրթաթոշակի տրամադրում
Հայաստանում ֆրանսիական համալսարանում Տուրիզմի և մշակութաբանության մագիստրատուրայի հովանավորություն
Համագործակցություն` «Խոսենք հայերեն» մշակութային քարոզարշավի շրջանակում
Dasaran.am կայքի ստեղծման հովանավորություն
Համագործակցություն`«Մանկապատ» նախագծի շրջանակում

## Education

Support in organization of internship of the Beirut Haigazian University and American University of Science and Technology in Lebanon students at VivaCell-MTS
Visit to the Armenian educational centers in Lebanon in the frames of VivaCell-MTS – Business with a Mission initiative
Open Door days for schoolchildren at VivaCell-MTS headquarters
Cooperation with 36 universities of Armenia
Partnership with Orran benevolent NGO
Support in opening Department of Communication Means, Microelectronic Circuits and Systems at the European Regional Educational Academy
Support with tuition fee to students of the Universities of Armenia
Sponsorship of Tourism and Cultural Studies Master's Degree Department at the French University of Armenia
Partnership in the frames of Let's Speak Armenian campaign
Sponsorship of Dasaran.am website
Partnership in the frames of Kinderwall project

## Շրջակա միջավայրի պաշտպանություն

Մասնակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տարածքում կազմակերպված ծաղիկների հավաքման միջոցառմանը
Աջակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից Երկրի օրվան նվիրված միջոցառումների կազմակերպմանը
Մասնակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ Եռաբլրի հուշահամալիրի տարածքում կազմակերպված ծառատունկին
Մասնակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ Եռաբլրի հուշահամալիրի տարածքում կազմակերպված քարերի հավաքման միջոցառմանը
Աջակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ նկարչական օրվա կազմակերպմանը
Աջակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ «Արևորդի» միջազգային բնապահպանական փառատոնի կազմակերպմանը

## Environmental Protection

Participation in flower gathering event on the territory of the Armenian Genocide Museum-Institute organized by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets
Support in organization of Earth Day celebrations by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets
Participation in tree planting event on the territory of the Yerablur organized by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets
Participation in stone gathering event on the territory of the Yerablur organized by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets
Support in organization of Painting Day by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets
Support in organization of the SunChild International Environmental Festival organized by the Foundation for the Preservation of

## Առողջապահություն

Համագործակցություն «BirthLink» ՀԿ հետ՝ ծննդատների և մանկական բաժանմունքների համար նորածնային խնամքի սարքավորումների ձեռքբերման գործում
Աջակցություն աուտիզմով տառապող երեխաների կրթավճարի ապահովմանը՝ Երեխաների զարգացման հայաստանյան կենտրոնի հետ համատեղ
Հայաստանում բժշկական միջազգային կոնգրեսի հովանավորություն
Հայաստանում բուժքույրական միջազգային կոնգրեսի հովանավորություն
Աջակցություն՝ Երևանում շտապօգնության մեքենաների վերազինման նախաձեռնությանը
Աջակցություն՝Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոնի համար ախտորոշման սարքավորումների ձեռքբերմանը
Աջակցություն՝ «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամին
Աջակցություն՝ Հայաստանի մարզերում 1-03 շտապօգնության ծառայության արդիկանացում նախագծին
Համագործակցություն՝ Հայաստանի կարմիր խաչի ընկերության հետ

## Healthcare

Partnership with BirthLink NGO in equipping maternity hospitals and neonatal care departments
Support in covering tuition of children suffering autism in partnership with the Armenian International Child Development Center
Sponsorship of the International Medical Congress of Armenia
Sponsorship of the International Nursing Congress in Armenia
Support in equipping emergency cars in Yerevan
Support in providing Kanaker-Zeytun Medical Center with diagnostic equipment
Support to the Armenian Bone Marrow Donor Registry Charitable Trust
Support to the 1-03 emergency service modernization project in the regions of Armenia
Partnership with the Armenian Red Cross Society

## Սպորտ

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի հովանավորություն
Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի հովանավորություն
«Ուլիս» ֆուտբոլային ակումբի հովանավորություն
Հայաստանյան լրագրողների միջև մինի-ֆուտբոլի մրցաշարի հովանավորություն
Հայաստանյան լրագրողների միջև սեղանի թենիսի մրցաշարի հովանավորություն
Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հովանավորություն
Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի հովանավորություն
Հայաստանի թենիսի ֆեդերացիայի հովանավորություն
«Հատիս Երևան» բասկետբոլային ակումբի հովանավորություն

## Sport

Sponsorship of the Chess Federation of Armenia
Sponsorship of the National Olympic Committee of Armenia
Sponsorship of the Ulysses football club
Sponsorship of the mini-football tournament among the Armenian journalists
Sponsorship of the table tennis tournament among the Armenian journalists
Sponsorship of the Football Federation of Armenia
Sponsorship of the Basketball Federation of Armenia
Sponsorship of the Tennis Federation of Armenia
Sponsorship of the Hatis Yerevan basketball club

## Այլ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա հեռուստամարաթոնի հովանավորություն
Աջակցություն՝ Արտաշատի Սբ Հովհաննես եկեղեցու վերանորոգմանը
Աջակցություն՝ «Արմենիա» առագաստանավի շուրջերկրյա ճանապարհորդությանը
Աջակցություն՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին ավելի քան հարյուր գրքի ձեռքբերման հարցում
«Նա/Նե» ամենամյա մրցանակաբաշխության ուսանողական անվանակարգի հովանավորություն
Բնակարաններ՝ վանաձորցի 20 անօթևան ընտանիքի
Համագործակցություն՝ Հայաստանի գյուղատնտեսության նախարարության հետ
Աջակցություն՝ «Ունիսոն» ՀԿ
Wi-Fi ինտերնետի ապահովում Երևանի կենդանաբանական այգում
Աջակցություն Չինարի գյուղին՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների կողմից
«Գարնանային ներշնչանք» նախագծի կազմակերպում
Էրեբունի-Երևան տոնակատարությունների հովանավորություն

## Other

Sponsorship of Hayastan All-Armenian Fund annual telethon
Support in renovation of St Hovhannes Church in Artashat
Support to Armenia boat traveling the world
Support to the Armenian Genocide Museum-Institute in obtaining more than 100 books
Sponsorship of the  Na/Ne Award student nomination
20 apartments to homeless families in Vanadzor
Partnership with the Ministry of Agriculture of Armenia
Support to the Unison NGO
Provision of Wi-Fi at Yerevan Zoo
Support to Chinari village by VivaCell-MTS employees
Organization of Spring Inspiration project
Sponsorship of Erebuni-Yerevan celebrations

# Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ
# Information and Communication Technologies









## Եռակողմ հուշագիր՝ ՎիվաՍել–ՄՏՍ–ի, «Սինոփսիս Արմենիայի» և «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջև

ՎիվաՍել–ՄՏՍ–ը, «Սինոփսիս Արմենիա» ընկերությունը, ինչպես նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամը ստորագրեցին ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակաբաշխության իրականացման վերաբերյալ եռակողմ համաձայնագիր:

## Trilateral Memorandum Signed between VivaCell–MTS, Synopsys Armenia and Hayastan All–Armenian Fund

VivaCell–MTS, Synopsys Armenia, as well as Hayastan All–Armenian Fund signed a trilateral agreement on the realization of the Republic of Armenia Presidential Award for Outstanding Contribution in IT Sphere.




NOVOSTI–ARMENIA
newsarmenia.am



## «ԱրմԹեք» համաժողովի հովանավորություն

Գիտական ներուժն ամենաթանկ կապիտալն է: ՎիվաՍել–ՄՏՍ–ը դարձավ Հայաստանի բարձր տեխնոլոգիաների «ԱրմԹեք» 4–րդ ամենամյա համաժողովի գլխավոր հովանավորը:
Բարձր տեխնոլոգիաների ոլորտի շարունակական զարգացմանը նպաստելու, գործարար և ներդրումային նոր հնարավորությունների բացահայտմանն ուղղված ջանքերը բխում են երկրի շահերից: «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի, «Սինոփսիս Արմենիա» ընկերության, «Վիասֆեր» տեխնոպարկի, Զարգացման հայկական գործակալության, ՏՏ ձեռնարկությունների միության և «Յունիքոմփ» ընկերության աջակցությամբ կազմակերպված համաժողովը կարևոր էր նաև մասնագիտական ընդլայնված ցանց ստեղծելու առումով:

## Sponsorship of the ArmTech Congress

Scientific potential is the most valuable asset. VivaCell–MTS undertook the general sponsorship of the ArmTech 4th Annual Congress. The efforts aimed at facilitating the continuous development of the sphere of high technologies and indentifying new investment opportunities stem from our country's interests. The congress organized with support of the Enterprise Incubator Foundation, Synopsys Armenia, Viasphere techno–park, Armenian Agency for Development, Union of IT Enterprises and Unicomp was important also for the opportunity to create professional networks.









## «ՏՏ ոլորտում լավագույն մենեջեր» մրցանակի հովանավորություն

ՏՏ ոլորտում կառավարման մակարդակը բարձրացնելու նպատակով, 22 կառավարության հայտարարած մրցույթի արդյունքում ընտրված երեք լավագույն մենեջեր գործուղվեցին Սթենֆորդի համալսարան՝ 15–օրյա վերապատրաստման դասընթացների:
Մրցանակաբաշխությունն իրականացվեց «Սինոփսիս Արմենիա» ընկերության նախաձեռնությամբ և ՎիվաՍել ՄՏՍ–ի գլխավոր հովանավորությամբ:

## Sponsorship of the Best IT Manager Award

To increase the level of management in the sphere of information technologies, three of the best managers chosen as a result of the competition announced by the government of Armenia attended the 15–day training course at the Stanford University. The award was initiated by Synopsis Armenia, and sponsored by VivaCell–MTS.


VIVAcell
MTS





## Միկրոէլեկտրոնիկայի օլիմպիադայի հովանավորություն

Կրթությունը կանխորոշում է երկրի ապագան: Զարգանում են այն երկրները, որտեղ գնահատում են խելացի, տաղանդավոր մարդկանց: Միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադայի գլխավոր հովանավորությունը ստանձնած ՎիվաՍել–ՄՏՍ–ը խրախուսում է այս ուղղությամբ «Սինոփսիս Արմենիայի» գործադրած ջանքերը: Երկրի մրցակցային առավելությունը խթանելու նպատակով իրականացվող քայլերի արդյունքում բացահայտվում է երիտասարդ գիտական ներուժը:

## Sponsorship of the Microelectronics Olympiad

Education defines the future of the country. Only the countries, which value talented people, develop. VivaCell–MTS, which undertook the general sponsorship of the Annual International Olympiad in Microelectronics, facilitates the efforts by Synopsis Armenia made in this direction. The efforts to promote the competitive equity of the country reveal the academic potential of the country.


VIVAcell
MTS



## «Դիջիթեք» ցուցահանդեսի հովանավորություն

ՎիվաՍել–ՄՏՍ–ը դարձավ «Դիջիթեք» ամենամյա ցուցահանդեսի պլատինե հովանավորը: «Դիջիթեքը» կազմակերպվեց ՀՀ վարչապետի բարձր հովանու ներքո: Ցուցահանդեսին մասնակցեց 115 ընկերություն: ՎիվաՍել–ՄՏՍ–ի տաղավարի այցելուներին հնարավորություն տրվեց մասնակցելու վիճակահանության և շահելու արժեքավոր նվերներ:

## Sponsorship of the Digitec Expo

VivaCell–MTS became the platinum sponsor of the annual DigiTec exhibition. The expo was organized under the high patronage of the Prime Minister of Armenia. 115 companies participated in the exhibition. The visitors of VivaCell–MTS stand had an opportunity to participate in a draw and win valuable gifts.









## Հայաստանի ռոբոտների բաց առաջնության հովանավորություն

Հայաստանի առաջատար բջջային օպերատորը դրսևորեց գերազանց արդյունքի հասնելու վճռականություն` սկսելով նոր համագործակցություն: Ընկերությունն աջակցեց Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությանը` Հայաստանում ռոբոտաշինությունը զարգացնելու և ոլորտում տաղանդավոր երիտասարդներին բացահայտելու նպատակով բաց առաջնություն կազմակերպելու հարցում: Իր նախագծած ու պատրաստած ռոբոտներով «Գծին հետևող ռոբոտ» և «Իրեր տարբերակող ու դասակարգող ռոբոտ» մրցույթներին մասնակցեց երիտասարդ ինժեներներից բաղկացած ութ թիմ: ՎիվաՍել-ՄՏՍ-ը ստանձնեց առաջնության գլխավոր հովանավորությունը:

## Sponsorship of Armenian Robots Open Championship

Armenia’s leading mobile operator manifested decisiveness to achieve excellence of result starting a new cooperation. The Company supported the Union of Information Technologies Enterprises in organizing an open championship to develop robot-building and discovering talented youth in Armenia.
8 teams comprised of young engineers competed in Robots Following the Line as well as Robots Differentiating and Classifying Items competitions. VivaCell-MTS became the general sponsor of the championship.

Մշակույթ
Culture







## Լիլիթ Պիպոյանի համերգի հովանավորություն

ՎիվաՍել–ՄՏՍ–ն այս տարի դարձավ ազգային և հեղինակային երաժշտության կատարող և կոմպոզիտոր Լիլիթ Պիպոյանի համերգի գլխավոր հովանավորը: Տարիների ընթացքում հայաստանյան գյուղերում ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված ազգային երաժշտության բազմաթիվ գոհարները Պիպոյանի շնորհիվ հասու դարձան լայն լսարանին:

## Sponsorship of Lilit Pipoyan concert

This year VivaCell–MTS became the general sponsor of the recital by Lilit Pipoyan, a talented composer and performer of national music. Owing to Pipoyan, the numerous pieces of national music revealed during the field studies held in Armenian villages are now available to a wider audience.








## Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հովանավորություն

ՎիվաՍել–ՄՏՍ–ի գլխավոր հովանավորությամբ՝ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբն այժմ հնարավորություն ունի ներկայացնելու դասական երաժշտության գոհարների իր կատարումները համաշխարհային բեմերում:

## Sponsorship of the State Youth Orchestra of Armenia

With VivaCell–MTS general sponsorship, the State Youth Orchestra of Armenia now has a chance to perform masterpieces of the classical music on the world stages.











## «Վերադարձի» դասական երաժշտության փառատոնի հովանավորություն

«Վերադարձը» հինգերորդ անգամ համախմբեց կարոտի ճանապարհով հայրենիք եկած հայորդիներին: ՎիվաՍել-ՄՏՍ-ը կրկին դարձավ դասական երաժշտության այս փառատոնի գլխավոր հովանավորը: Հայաստանի մշակութային կյանքի ամենանշանավոր իրադարձություններից մեկն իր հարկի տակ համախմբեց Գերմանիայից, Բելգիայից, Դանիայից և ԱՄՆ-ից ժամանած անվանի երաժիշտների: Փառատոնի կազմակերպիչն էր «Արվեստների պատկերասրահ» մշակութային հիմնադրամը:

## Sponsorship of the Return Classical Music Festival

For the fifth time the Return Festival united Armenians from around the world. And once again, VivaCell-MTS became the general sponsor of this music festival. One of the most outstanding events in the cultural life of Armenia brought together renowned musicians from Germany, Belgium, Denmark and the United States. The organizer of the festival was the Gallery of Arts Cultural Fund.









## «Նոր անուններ» փառատոնի հովանավորություն

«Նոր անուններ» երաժշտական միջազգային փառատոնը դարձավ պատանի կատարողների ինքնադրսևորման ինքնատիպ հարթակ: Առաջին միջազգային փառատոնի գլխավոր հովանավորությունը ստանձնեցին ՎիվաՍել–ՄՏՍ–ը և «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունները: Տարբեր երկրներից ժամանած մինչև 18 տարեկան պատանի երաժիշտների թվում մասնակցեցին միջազգային և հանրապետական մրցույթների բազմակի դափնեկիրներ, տարբեր հիմնադրամների կրթաթոշակառուներ, աշխարհի տարբեր բեմահարթակներում հանդես եկած և ծափողջույնների արժանացած կատարողներ:
Փառատոնն անցավ ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո, ՀՀ Մշակույթի նախարարության, Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ և Հայաստանի պետական կամերային նվագախմբերի աջակցությամբ:

## Sponsorship of the New Names Festival

New Names international music festival became a special platform of self-expression for young performers. VivaCell-MTS and the South Caucasus Railway became the general sponsors of the international festival held for the first year. Participants aged 18 and under, included those who already have numerous republican and international awards, scholarships of a variety of foundations, who have won ovations in the concert halls of the world.
The festival was held under the high patronage of the First Lady of the Republic of Armenia Mrs Rita Sargsyan, and with the support of RA Ministry of Culture, the State Philharmonic and the State Chamber orchestras of Armenia.





## «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հովանավորություն

ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցում է հայ կինեմատոգրաֆի զարգացմանը՝ վեց տարի շարունակ ստանձնելով «Ոսկե ծիրան» երևանյան միջազգային կինոփառատոնի գլխավոր հովանավորությունը:
Միջազգային կինոարվեստի ամենանշանավոր նմուշները երիտասարդությանը հասանելի դարձնելու նպատակով, ՎիվաՍել-ՄՏՍ-ն ու «Ոսկե ծիրանն» այս տարի նախաձեռնեցին ուսանողական («Գաուդեամուս») կինոփառատոնը:
Տարվա հաջորդ նորությունը «Web ծիրան» համահայկական կինոփառատոնն էր, որին մասնակցելու հնարավորություն ստացան Հայաստանում և արտերկրում ապրող բոլոր հայ կինոռեժիսորները:

## Sponsorship of the Golden Apricot International Film Festival




VivaCell-MTS supports the development of the Armenian cinematography by undertaking the general sponsorship of the Golden Apricot International Film Festival for the sixth year in a row.
To make the most outstanding examples of the world cinema available to the young generation, VivaCell-MTS and the Golden Apricot festival initiated the Gaudeamus student film festival this year.
Another novelty this year was the Web Apricot pan-Armenian film festival, which gave opportunity to all Armenian film directors living both in Armenia and abroad to present their films to the public.







## Պատկերապատման միջազգային փառատոնի հովանավորություն

Հայաստանում գրաֆիկական վեպերի արվեստը խրախուսելու նպատակով, ՎիվաՍել-ՄՏՍ-ը դարձավ պատկերապատման միջազգային առաջին փառատոնի գլխավոր հովանավորը: Արվեստի այս ժանրը ոչ միայն զվարճանալու, այլև ծանոթացնելու և կրթելու նպատակ ունի:

## Sponsorship of the International Comics Festival in Armenia

To encourage the art of graphic novel in Armenia, VivaCell-MTS undertook the general sponsorship of the first international festival.
This genre of art is not just a means of entertain, but rather a tool for familiarization and education.









## «Ազգային պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոնի հովանավորություն

«Արվեստների պատկերասրահ» մշակութային հիմնադրամը ՎիվաՍել–ՄՏՍ–ի գլխավոր հովանավորությամբ ազդարարեց «Ազգային պատկերասրահ» միջազգային յոթերորդ փառատոնի մեկնարկը: Հանրահայտ և Հայաստանում դեռևս ճանաչում չունեցող հայ և օտարազգի կատարողները ներկայացրեցին  դասական երաժշտարվեստի նմուշները:

## Sponsorship of the National Gallery International Music Festival

The Gallery of Arts Cultural Foundation with the general sponsorship of VivaCell–MTS announced the opening of the National Gallery 7th International Festival. Renowned and less famous in Armenia musicians presented pieces of classical music art to the Armenian public.











## Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հովանավորություն

Մշակույթի բարեկամ ՎիվաՍել–ՄՏՍ–ը դարձավ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հերթական համերգաշրջանի գլխավոր հովանավորը: Համերգաշրջանի բացումը ազդարարած Երևանյան 5–րդ միջազգային փառատոնին իրենց մասնակցությունը բերեցին համաշխարհային ճանաչում ունեցող մենակատարներ: Մեկնարկեց նաև նոր համերգաշար՝ բուհերի ուսանողների համար:

## Sponsorship of the State Philharmonic Orchestra of Armenia

Culture’s friend VivaCell–MTS became the general sponsor of the new season of Armenia’s State Philharmonic Orchestra. The 5th Yerevan International Festival, opening the concert season, hosted world known musicians.
This year was marked also by the opening of a new concert season for students.









## Գյումրիի «Վերածնունդ» միջազգային երաժշտական փառատոնի հովանավորություն

2007 թվականից Գյումրիում անցկացվող «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնի նպատակն է հայտնաբերել շնորհալի կատարողների և նպաստել Հայաստանում երաժշտարվեստի զարգացմանն ու մասսայականացմանը:
Այս տարի մրցույթին մասնակցեց Հայաստանի և աշխարհի 22 երկրի շուրջ 1100 երաժիշտ: Փառատոնի կազմակերպիչներն էին՝ 22 մշակույթի նախարարությունը, Մարդկային ռեսուրսների զարգացման «Փյունիկ» համահայկական հիմնադրամը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղը: «Վերածնունդն» անցկացվեց 22 առաջին տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո:
Միջոցառման շրջանակներում հրավիրվեց «Հայաստանը և համաշխարհային մշակույթը» թեմայով միջազգային գիտաժողով՝ նվիրված հայ մեծանուն կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի 90-ամյակին:

## Sponsorship of the Renaissance Gyumri International Music Festival

The aim of the Renaissance International Contest and Festival held in Gyumri since 2007 is to discover talented performers and facilitate to the development and popularity of the musical art in Armenia.
This year the festival hosted around 1100 musicians from 22 countries.
The festival was organized by the RA Ministry of Culture, the Pyunik Pan-Armenian Human Resources Development Fund and the Gyumri branch of the Yerevan State Conservatory after Komitas.
The Renaissance Festival was held under the High Patronage of the First Lady of RA Mrs Rita Sargsyan.
Armenia and the World Culture International Conference devoted to the 90th anniversary of the famous Armenian composer Edvard Mirzoyan was held in the frame of the festival.







## Աջակցություն՝ «Սպեղանի» երգչախմբին

Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակի հավերժացման նպատակով ստեղծված և հայկական խմբերգային արվեստի զարգացման գործում մեծ ավանդ ներդրած «Սպեղանի» երգչախումբը գործունեության 15–ամյա պատմություն ունի: Այժմ այն խմբերգային երաժշտության միջազգային ֆեդերացիայի անդամ է: Երգչախումբը կարևոր դափնիներ է շահել միջազգային խմբերգային հեղինակավոր մրցույթներում:

## Support to Speghani choir

Speghani choir created in memory of the soldiers who died in Karabakh war and has to a great extent contributed to the development of the Armenian choral art has a history of 15 years. The choir is a member of the international federation for choral music and has won in numerous prestigious choral musical contests.

# Կրթություն
# Education








## Համագործակցություն՝ «Խոսենք հայերեն» մշակութային քարոզարշավի շրջանակում

ՎիվաՍել-ՄՏՍ-ը դարձավ «Խոսենք հայերեն» մշակութային քարոզարշավի գործընկերը: Համրահայտ «Դորլինգ Քինդերսլի» հրատարակչության շարքի նկարազարդ ու գունեղ առաջին տասը գիրքը մեր լեզվի մաքրությունը պահպանելու և առօրյայում գործածվող բազմաթիվ բառերի հայերեն համարժեքները լայն շրջանառության մեջ դնելու հնարավորություն է:
«Վէմ» հրատարակչության հրատարակած 10 գրքում ամփոփված է շուրջ հազար բառ:

## Partnership in the frames of Let's Speak Armenian campaign

VivaCell-MTS became the partner of the Let's Speak Armenian cultural campaign. The first ten illustrated and colorful volumes by the renowned Dorling Kindersley are called to keep our native language pure and to provide opportunity to make the Armenian equivalents of numerous words widely used.
The 10 volumes published by the Vem Publishing House include around 1000 words.









## Համագործակցություն Հայաստանի 36 բուհի հետ / Բաց դռների օրեր դպրոցականների համար՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակում

Ընկերության և 36 բուհի միջև կնքված փոխգործակցության հուշագրի արդյունքում, ուսանողները հնարավորություն ունեցան ունկնդրելու ՎիվաՍել-ՄՏՍ-ի մասնագետների դասախոսությունները, բուհում ստացված տեսական գիտելիքները համադրելու գործնականի հետ և ծանոթանալու ամենահաջողակ կորպորատիվ կառավարման սկզբունքներին:
Դպրոցականները հնարավորություն ստացան կազմակերպված բաց դռների օրերին այցելելու Հայաստանի առաջատար բջջային օպերատորի գլխամասային գրասենյակ՝ բացահայտելով հեռահաղորդակցման ոլորտը, դրա գաղտնիքները, կիրառվող տեխնոլոգիաները՝ նաև շրջայց կատարելով ընկերության բաժիններում:

## Cooperation with 36 universities of Armenia / Open Door days for schoolchildren at VivaCell-MTS headquarters

As a result of cooperation between the Company and the 36 universities students had an opportunity to attend lectures provided by VivaCell-MTS specialists giving them the opportunity to combine theory they learn at the university with the real operation, and were exposed to the most successful Corporate Management approach.
Schoolchildren had the chance to attend open door days organized by Armenia's leading mobile operator and get acquainted with the telecom world, its secrets, as well as equipments and technologies, during the tour to the company departments.


DAS








## Dasaran.am կայքի ստեղծման հովանավորություն

ՀՀ ԿԳ նախարարության, Dasaran.am կրթական ծրագրի և ՎիվաՍել–ՄՏՍ–ի միջև ստորագրված եռակողմ համաձայնագրի արդյունքում կյանքի կոչված ծրագիրը, ընկերության գլխավոր հովանավորությամբ, անվճար հիմունքներով հասանելի է Հայաստանի բազմաթիվ դպրոցների, հնարավորություն տալով ծնողներին ցանկացած պահի տեղեկանալու երեխայի ուսման առաջընթացի, միջին գնահատականների մասին, հետևելու տնային առաջադրանքների կատարման արդյունքին ու վարքագծին:

## Sponsorship of Dasaran.am website

Owing to the trilateral agreement signed between the Ministry of Education and Science, Dasaran.am educational project and VivaCell–MTS, the project is now freely available to a number of schools, giving parents an opportunity to learn about the child's school progress, average marks, follow homework and behavior.


ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
CAREER DEVELOPMENT PROGRAM
Career Development Program
Կարիերայի զարգացման ծրագիր





## Եռակողմ հուշագիր՝ ապագա մասնագիտացման հարցում երիտասարդներին կողմնորոշելու համար

Սեփական նախասիրությունները, հմտություններն ու գիտելիքները շուկայի պահանջներին համապատասխանեցնելու հարցում երիտասարդ սերնդին ընդառաջ են գնում ՎիվաՍել-ՄՏՍ-ը, Կրթության և գիտության նախարարությունն ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնը: Ստորագրված հուշագիրը սահմանում է երկարաժամկետ ռազմավարական համագործակցության այն ուղղությունները, որոնք նպաստելու են ավագ դպրոցների զարգացմանը:

## Trilateral memorandum to support in professional orientation of young people

VivaCell-MTS, Ministry of Education and Science, and the Youth Professional Orientation Center under the Ministry of Labor and Social Issues of Armenia meet the needs of the Armenian youth in defining their personal preferences, skills and knowledge based on the market demand.
The memorandum set the long-term strategic directions of cooperation to promote the development of the high school.





## Համագործակցություն՝ «Մանկապատ» նախագծի շրջանակում

Սյունիքի մարզի Գորայք գյուղում տեղադրված համակարգչային երկու տերմինալը օրվա ցանկացած ժամի կրթական կայքեր մուտք գործելու հնարավորություն են ընձեռում՝ խթանելով երեխաների ինքնակրթությունն ու բացահայտելով նրանց ունակությունները:

## Partnership in the frames of the Kinderwall project

Two terminals installed in the village of Gorayk, Syunik region give opportunity to access educational websites any time of the day, which promotes self-education among children, revealing their aptitudes.




REGIONAL EDUCATIONAL







## Աջակցություն` Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում կապի միջոցների, միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգերի ամբիոնի բացմանը

ՎիվաՍել–ՄՏՍ–ն աջակցում է «Սինոփսիս Արմենիա» ընկերությանը և Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիային` Հայաստանում ՏՏ կրթության զարգացման գործում: ԵԿՏԱ–ում պաշտոնապես բացված կապի միջոցների, միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգերի ամբիոնը ծառայում է այդ նպատակին: ՎիվաՍել–ՄՏՍ–ի աջակցությունն ուղղված էր համապատասխան լսարանային տարածքի վերանորոգմանը, համապատասխան համակարգչային տեխնիկայով դրա կահավորմանը և ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձի, հավասարեցված այլ վճարների փոխհատուցմանը:

## Support in opening Department of Communication Means, Microelectronic Circuits and Systems at the European Regional Educational Academy

VivaCell–MTS supports Synopsys Armenia and the European Regional Educational Academy in developing the sphere of infomation technologies in Armenia. The department of Communication means, Microelectronic Circuits and Systems opened in the European Regional Educational Academy serves the purpose. VivaCell–MTS support was aimed at the renovation of the classroom, its computer equipment as well as provision of salaries and remunerations of the faculty.







## Հայաստանի բուհերի 150 ուսանողի կրթաթոշակի տրամադրում

Հատուկ կարիքներ ունեցող, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից ուսանողների կրթաթոշակային աջակցության ծրագրի մեկնարկով, ընկերությունը ստանձնեց մինչև ուսման ավարտը ուսանողներին օժանդակելու պատասխանատվությունը:
Կրթաթոշակային այս աննախադեպ ծրագիրը նպատակ ունի կրթությունը հասանելի դարձնելու խոցելի խմբերում ընդգրկված ուսանողներին:

## Support with tuition fee to 150 students of the universities of Armenia

With the launch of the tuition program to students in special need, and from socially unprotected families, the Company undertook the responsibility to support the students until graduation.
This unique scholarship aims at providing students from vulnerable groups of society an access to university education.



## Շրջակա միջավայրի պահպանություն
## Environmental Protection











## Մասնակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի տարածքում կազմակերպված ծաղիկների հավաքման միջոցառմանը

Հայոց ցեղասպանության անմեղ նահատակների հիշատակին խոնարհված ծաղիկներն արդեն երկրորդ տարին վերամշակվում են՝ ՎիվաՍել–ՄՏՍ–ի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի համագործակցության արդյունքում: Աղբի վերածվելու փոխարեն՝ ծաղիկների չորացված թերթիկները թանգարան–ինստիտուտի համար վերածվում են վերամշակված թղթից պատրաստված բացիկների, հուշագրերի ու շնորհակալագրերի: Իսկ ցողուններից պատրաստվում է պարարտախառնուրդ՝ հուշահամալիրի այգիների մշակման համար:

## Participation in flower gathering event on the territory of the Armenian Genocide Museum–Institute organized by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

Owing to the cooperation between VivaCell–MTS and the Foundation for Preservation of Wildlife and Cultural Assets the flowers brought to the Armenian Genocide Memorial eternal flame are recycled for the second year in a row. Instead of turning into a waste, the dried petals of the flowers turn into greeting cards, memorandum and gratitude sheets for the Armenian Genocide Museum–Institute. The fertilizer made from the flower stems is used in the park adjacent to the memorial.









## Մասնակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ Եռաբլրի հուշահամալիրի տարածքում կազմակերպված ծառատունկին

Հարյուրավոր ծառեր անվանակոչվել են Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների անունով: Տարածքը նախապես քարերից մաքրելու և այն ծառատունկի նախապատրաստելու աշխատանքներին մասնակցել են ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցները և նախաձեռնության ակունքներում կանգնած՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի «Արևորդի» էկո-ակումբի սաները: Երկրի օրվան նվիրված քարոզարշավի ամփոփիչ միջոցառումը նվիրվել է Շուշիի ազատագրման 19-րդ տարեդարձին: Հերոսների անուններն անմահացնելու այսօրինակ նախաձեռնությունը շարունակական է լինելու: Տարածքը խնամելու համար օգտագործվում է Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հավաքված սգո ծաղիկների վերամշակման արդյունքում ստացված պարարտանյութը:

## Participation in stone gathering event on the territory of the Yerablur organized by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

Hundreds of trees now carry the names of freedom fighters, who died during the war for Artsakh. The stone removal and territory preparation works were attended by VivaCell-MTS employees and the children of SunChild eco-club of the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets that stands behind the initiative. The event finalizing the Earth Day campaign was devoted to the 19th anniversary of the liberation of Shushi. The original initiative of immortalizing the heroes' names will be continuous. The territory is fertilized with the flowers gathered from the Tsitsernakaberd memorial recycled for this purpose.


FPWC
VIVA





### Աջակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից Երկրի օրվան նվիրված միջոցառումների կազմակերպմանը

2011–ի Երկրի օրվա մեկնարկը նշանավորվեց «95 ծառ» ֆիլմի ցուցադրությամբ: Կարճամետրաժ այդ ֆիլմը վավերագրել էր Արևմտյան Հայաստանից Երևան բերված և Ցեղասպանության թանգարան–ինստիտուտի հարակից այգում տնկված 95 տնկիների հուզիչ պատմությունը: Այգու այդ հատվածում տեղադրվեց «Հիշողության պուրակ» ցուցանակը: Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հետ ՎիվաՍել–ՄՏՍ–ի քառամյա համագործակցությունը նպատակ ունի հանրության ուշադրությունը սևեռելու համամարդկային խնդիրների վրա:

### Support in organization of Earth Day celebrations by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

The launch of the Earth Day 2011 was signified by the screening of 95 Trees film. This short film documents the touching story of the 95 young trees brought from the Western Armenia to Yerevan and planted in the park adjacent to the Armenian Genocide Museum–Institute. The section of the park is now named Memory Garden. The four years of cooperation between VivaCell–MTS and the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets aims to focus the public attention on problems common to all mankind.


VIVA cell
MTS







## Աջակցություն՝ բնապահպանական թեմայով էսսեների մրցույթի կազմակերպմանը

Հայաստանի առաջատար բջջային օպերատորը համակարգված մոտեցում է դրսևորում շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված 5-ամյա քարոզարշավում: Ամփոփելով Հայաստանի բոլոր բուհերի ուսանողների շրջանում անցկացված բնապահպանական թեմայով աշխատանքների մրցույթը, ՎիվաՍել-ՄՏՍ-ը պարգևատրել է 4 բուհի 12 ուսանողի և խորհրդատու դասախոսների՝ իրենց աշխատանքով բնության հանդեպ բացառապես սպառողի հոգեբանությանը հակադարձելու և մաքուր շրջակա միջավայրի անհրաժեշտության մասին քարոզելու համար: Նրանց շնորհվել են մրցույթին մասնակցության հավաստագրեր, խրախուսական նվերներ և դրամական պարգևներ: Մրցույթում հաղթած ուսանողների աշխատանքները տեղադրվել են ՎիվաՍել-ՄՏՍ-ի կայքէջում:

## Support in organization of the Environmental Essay Competition

Armenia's leading mobile operator stays committed to the environmental conservation campaign it has supported for the last 5 years. Upon the completion of the environmental essay contest held among the university students of Armenia, VivaCell-MTS awarded 12 students and instructors from 4 higher education institutions for propagating the necessity of clean environment and negation of purely consumerist attitudes. The winners received certificates of participation, encouragements and prizes. The winning works were posted on VivaCell-MTS official website.







## Աջակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ նկարչական օրվա կազմակերպմանը

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնած համահայկական 4-րդ նկարչական մրցույթը մեկնարկեց Երևանի կենդանաբանական այգում: ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությամբ, երեխաների համար այդ օրը մուտքը կենդանաբանական այգի անվճար էր: Ամենամյա մրցույթի կազմակերպմանն աջակցեց նաև Երևանի քաղաքապետարանը: Երեխաներն իրենց ստեղծագործությունների միջոցով փորձում էին բարձրաձայնել իրենց ամենակենսական՝ առողջ և բարեկեցիկ միջավայրում ապրելու իրավունքը: Մրցույթի պաշտոնական՝ www.paintingday.sunchild.org կայքում իրենց նկարների առցանց տարբերակները տեղադրելու հնարավորություն ստացան աշխարհի տարբեր հատվածներում ապրող 5-ից 16 տարեկան բազմաթիվ երեխաներ:



## Support in organization of Painting Day by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

The 4th pan-Armenian painting contest organized by the Foundation for Preservation of Wildlife and Cultural Assets started at the Yerevan zoo. With VivaCell-MTS support the entrance to the zoo was free for children that day. The Yerevan Municipality also supported the organization of the annual contest. Through the paintings the children participating in it tried to speak up of their most basic right to live in a healthy and proper environment. Children aged 5 to 16 from around the world got a chance to post their works on the official webpage of the contest at www.paintingday.sunchild.org.


ВТБ
МИКА
ЛИМИТЕД





## Աջակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ «Արևորդի» միջազգային բնապահպանական փառատոնի կազմակերպմանը

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ և ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությամբ իրականացվող «Արևորդի» 3-րդ միջազգային փառատոնն այս անգամ կազմակերպվեց «Գտի՛ր քո հետքը բնության մեջ» խորագրի ներքո: «Արևորդին» մեկնարկեց ավանդույթ դարձած կենդանիների դիմակահանդես-շքերթով: Ցուցադրվեց ավելի քան 70 ֆիլմ՝ աշխարհի 30 երկրից: ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը մրցութային ծրագրերի և բնապահպանական ֆիլմերի մրցույթի հաղթողներին հանձնեց հատուկ մրցանակներ: Փառատոնի շրջանակներում նշվեց նաև կենդանաբանական այգու 70-ամյակը:

## Support in organization of the SunChild International Environmental Festival organized by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

The SunChild 3rd international festival organized upon the initiative of the Foundation for the Protection of Wildlife and Cultural Assets and with the support of VivaCell-MTS this time was held under Find Your Trace in the Nature slogan. The SunChild started with an already traditional masquerade of animals. More than 70 films from 30 countries were screened during the festival. VivaCell-MTS General Manager Ralph Yirikian awarded the winners of the festival programs and environmental film contest with special prizes. The celebrations of the 70 years of the Yerevan zoo took place in the frames of the festival.

## Առողջապահություն
## Healthcare











## Հայաստանում բժշկական միջազգային կոնգրեսի հովանավորություն

ՎիվաՍել-ՄՏՍ-ը և Երևանի պետական բժշկական համալսարանը երրորդ բժշկական համաշխարհային կոնգրեսում հայտարարեցին «Mobile-Health Solution» պիլոտային ծրագրի մեկնարկի մասին: Առողջապահական այս ծառայության հիմքում «Ericsson» ընկերության «Mobile-Health» անլար տեխնոլոգիան է, որի օգնությամբ` ՎիվաՍել-ՄՏՍ-ի ցանցի միջոցով, հիվանդի առողջական վիճակը ներկայացնող տվյալները փոխանցվում են բժշկին: Այս համակարգը թույլ է տալիս արագ փոխանցել արյան ճնշման, սրտի զարկերի մասին և տարբեր սենսորների միջոցով հավաքագրված տվյալները: 3-րդ համաշխարհային կոնգրեսի գլխավոր հովանավորությունը ստանձնել էր ՎիվաՍել-ՄՏՍ-ը:

## Sponsorship of the International Medical Congress of Armenia

At the 3rd international medical congress, VivaCell-MTS and Yerevan State Medical University announced the launch of Mobile-Health Solution pilot project. This healthcare project based on Ericsson's wireless Mobile-Health technology applying VivaCell-MTS network allows transferring the data about the health condition of the patient to the doctor. The system provides fast transmission of information gathered with the help of a variety of sensors on blood pressure, heartbeats, etc. The general sponsor of the 3rd world congress was VivaCell-MTS.








## Հայաստանում բուժքույրական միջազգային կոնգրեսի հովանավորություն

Հայաստանում կայացավ առաջին միջազգային բուժքույրական համագումարը: ՎիվաՍել-ՄՏՍ-ը դարձավ համագումարի գլխավոր հովանավորը՝ մասնագետներին  հնարավորություն ընձեռելով քննարկելու մատուցվող ծառայությունների որակի բարձրացման ուղիները, բացահայտելու քույրական գործի զարգացման հեռանկարները, հնարավոր մարտահրավերները և դրանք հաղթահարելու մեխանիզմը:

## Sponsorship of the International Nursing Congress in Armenia

Armenia hosted the first international nursing conference. VivaCell-MTS became the general sponsor of the forum giving specialists an opportunity to discuss ways of improving quality of rendered services, discovering perspectives of development of the sphere, the possible challenges and the mechanisms of overcoming them.









## Համագործակցություն «BirthLink» ՀԿ հետ՝ ծննդատների և մանկական բաժանմունքների համար նորածնային խնամքի սարքավորումների ձեռքբերման գործում

ՎիվաՍել–ՄՏՍ–ը և «BirthLink» ՀԿ–ն պայքարում են Հայաստանում մանկական մահացության ցուցանիշը կրճատելու ուղղությամբ: Նորածինների կյանքը կազմակերպության ուշադրության կենտրոնում է արդեն չորս տարի: Բժիշկների ջանքերն առավել արդյունավետ դարձնելու համար, այդ ընթացքում Հայաստանի 23 հիվանդանոցի հատկացվել են սարքավորումներ: Այսօր արդեն մասնագետներն արձանագրում են՝ ցանկալի արդյունքներն ակնհայտ են:

## Partnership with BirthLink NGO in equipping maternity hospitals and neonatal care departments

VivaCell–MTS and BirthLink NGO fight to decrease the index of child mortality in Armenia. The life of newborns has been within the focus of the Company’s attention for four years now. To make the efforts of doctors more efficient, 23 hospitals in Armenia have so far been provided with vital equipment. The specialists say the expected results are already obvious.















## Աջակցություն աուտիզմով տառապող երեխաների կրթավճարի ապահովմանը՝ Երեխաների զարգացման հայաստանյան կենտրոնի հետ համատեղ

ՎիվաՍել–ՄՏՍ–ի հատուկ ուշադրության կենտրոնում են աուտիզմով հիվանդ երեխաները: Ընկերությունը 2008 թվականից աջակցում է նրանց հետ կրթաշտկողական աշխատանքներ իրականացնող՝ Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի հայկական գրասենյակին: Արդյունքում՝ երեխաները կենտրոն են հաճախում առանց վճարի: Հերթական աջակցությունը դրսևորվեց հանրահայտ «Դորլինգ Քինդերսլի» հրատարակչության «Իմ առաջին գիրքը» շարքի 10 գրքերի նվիրատվության տեսքով: Նկարազարդ ու գունեղ գրքերի միջոցով աշխարհի տարբեր ժողովուրդների միլիոնավոր երեխաներ ճանաչում են իրենց մայրենին ու շրջապատող աշխարհը:

## Support in covering tuition of children suffering autism in partnership with the Armenian International Child Development Center

Children suffering with autism are within VivaCell–MTS' special focus of attention. In partnership with the Armenian International Child Development Center, the Company has been supporting the educational center since 2008. As a result, children attend the center free of charge. The presenting with the 10 of the My First Book series volumes by the well–known Dorling Kindersley publishing house was just another step of support. The illustrated colorful books help millions of children around the world learn their native language and discover the surrounding world.


TRANSIT
1-03







## Աջակցություն` Երևանում շտապօգնության մեքենաների վերազինման նախաձեռնությանը

ՎիվաՍել–ՄՏՍ–ը  աջակցում է 2011–2012 թթ. շտապ բուժօգնության գործակարգավարական համակարգի արդիականացման նախագծին: Համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար օգտագործվում է ՎիվաՍել–ՄՏՍ–ի` Հայաստանում ամենաընդարձակ 3G/3.5G ցանցը: Առողջապահության նախարարության հետ իրականացվող այս ծրագիրն ապահովում է շտապօգնության մեքենաների համակողմանի վերահսկողություն, կանչի ավտոմատ գրանցում և տվյալների հավաքագրում:

## Support in equipping emergency cars in Yerevan

VivaCell–MTS supports for modernization of ambulance dispatch system in 2011–2012. To provide the smooth operation, the system uses VivaCell–MTS’ 3G/3.5G connection, the widest network in Armenia. Implemented with the Ministry of Health of Armenia, this project provides comprehensive control of ambulance cars, automated registration of calls and data collection.


VIVAcell
MTS
Հայաստանի
առաջատար
բջջային
օպերատոր
ahoj
salut







## Համագործակցություն՝ Հայաստանի կարմիր խաչի ընկերության հետ

Հայկական կարմիր խաչի ընկերության և ԱՄՆ խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի նախաձեռնած «Բջջային կարճ հաղորդագրությունների տեղեկատվական թեժ գիծ» ծրագիրն իրականացավ ՎիվաՍել-ՄՏՍ և Օրանժ Արմենիա բջջային կապի օպերատորների հետ համագործակցությամբ: Երկու ընկերությունների բոլոր բաժանորդները հնարավորություն ստացան ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող իրենց հուզող հարցն անանուն ուղղելու տրամադրված կարճ համարին և 24 ժամվա ընթացքում ստանալու ճշգրիտ պատասխան: Ծրագրին աջակցեց նաև «Նիկիտա Մոբայլ» ընկերությունը:

## Partnership with the Armenian Red Cross Society

The information hot line through mobile short text messages project initiated by the Armenian Red Cross Society and the US Peace Corps was implemented in cooperation with two mobile operators of Armenia – VivaCell-MTS and Orange Armenia. The subscribers of the two operators received an opportunity to send their questions regarding HIV/AIDS to the provided short number and get exact answers within 24 hours. The project was also supported by Nikita Mobile.

Սպորտ
Sport




Basketball Club
HATIS
YEREVAN







## «Հատիս Երևան» բասկետբոլային ակումբի հովանավորություն

Սպորտում՝ ինչպես բիզնեսում, կարևոր է հաղթանակը: Արդեն երկրորդ տարին ՎիվաՍել–ՄՏՍ–ը ստանձնեց «Հատիս Երևան» բասկետբոլային ակումբի գլխավոր հովանավորությունը: Նման նախաձեռնությամբ հանդես գալու Հայաստանի առաջատար բջջային օպերատորի պատրաստակամությունը թիմի մրցունակությունը բարձրացնելու և միջազգային ասպարեզում բասկետբոլիստուհիների հաջողությունը տեսնելու ցանկության արդյունք է:

## Sponsorship of the Hatis Yerevan basketball club

In sport, like in business, victory is crucial. For the second year now VivaCell–MTS undertakes the general sponsorship of the Hatis Yerevan basketball club. Armenia's leading mobile operator's readiness to appear with an initiative of the kind stems from the desire to increase the competitiveness of the team and to see its success on international level.


Հայաստանի
առաջատար
բջջային
օպերատոր


ԵՐԵՎԱՆ, ՄԱՅԻՍԻ 27 - ՀՈՒՆԻՍԻ 1
ԶԼՄ-ների միջեւ մինի-ֆուտբոլի երկրորդ
մրցաշար «ՎիվաՍել-ՄՏՍ 2011» գավաթի համար
Մասնակիցներ
Ա խումբ
Բ խումբ





## Հայաստանյան լրագրողների միջև մինի–ֆուտբոլի մրցաշարի հովանավորություն

Հայաստանի առաջատար բջջային օպերատորը ստանձնեց ԶԼՄ–ների միջև մինի–ֆուտբոլի «ՎիվաՍել–ՄՏՍ–2011» երկրորդ մրցաշարի հովանավորությունը, որին մասնակցեց ութ թիմ: Ֆուտբոլի մասսայականացմանը նպաստող և առողջ ապրելակերպ խրախուսող մրցաշարի հաղթող թիմը պարգևատրվեց «ՎիվաՍել–ՄՏՍ–2011» մեծ գավաթով, պատվոգրով և մեդալներով: Գավաթ, պատվոգիր և մեդալ ստացան նաև 2–րդ և 3–րդ տեղեր զբաղեցրած թիմերը: Հատուկ մրցանակների արժանացան լավագույն խաղացողները: Մրցաշարի կազմակերպիչը Արտասահմանյան թղթակիցների ասոցիացիան էր:

## Sponsorship of the mini–football tournament among the Armenian journalists

Armenia’s leading mobile operator undertook the sponsorship of the 2nd min–soccer championship among representatives of the Armenian mass media. The winner of the contest promoting football popularity and healthy lifestyle was awarded with the VivaCell–MTS 2011 Big Cup, diploma, and medals. Equally cup, diplomas, and medals were given to the teams ranking the second and the third. The best players received special prizes. The organizer of the championship was the Association of Foreign Correspondents.










## «Ուլիս» ֆուտբոլային ակումբի հովանավորություն

Հայաստանի առաջատար բջջային օպերատորի՝ սպորտի ոլորտում կատարած ջանքերը պսակվեցին հաջողությամբ: «Ուլիս» ֆուտբոլային թիմը դարձավ 22 ֆուտբոլի չեմպիոն: Իր պատմության ընթացքում առաջին անգամ չեմպիոնի կոչում վաստակած ակումբը հաջորդ տարի կմասնակցի ֆուտբոլի Եվրոպայի չեմպիոնների լիգայի մրցաշարին:

## Sponsorship of the Ulysses football club

Armenia's leading mobile operator's efforts in the sphere of sports brought expected results. The Ulysses, for the first time in its history, won the Armenia championship, and will participate in the European champions' league games next year.






VIVAcell
ERIA








## Հայաստանի թենիսի ֆեդերացիայի հովանավորություն

ՎիվաՍել–ՄՏՍ–ը դարձավ Հայաստանի թենիսի ֆեդերացիայի 2011 թվականի գլխավոր հովանավորը: Այս մարզաձևի նկատմամբ հայ երիտասարդների վերաբերմունքը պարզապես հետաքրքրությունից վերածվել է իրական նախասիրության: Հայաստանի առաջատար բջջային օպերատորն աջակցեց նաև Մեծ սաղավարտի Roland Garros մրցաշարի հեռարձակմանը: Ֆեդերացիայի հետ համագործակցության արդյունքում, մեր մարզիկները հաջողությամբ հանդես եկան միջազգային տարբեր մրցաշարերում, իսկ Հայաստանում առաջին անգամ չորս Futures մրցաշար կազմակերպվեց տղամարդկանց և կանանց համար:

## Sponsorship of the Tennis Federation of Armenia

VivaCell–MTS undertook the Tennis Federation of Armenia general sponsorship in 2011. The simple interest toward this sport has recently grown into a true preferance among young Armenians. Armenia’s leading mobile operator also supported in broadcasting the Grand Slam Roland Garros championship.
As a result of cooperation with the federation, Armenian athlets successfully compete in a variety of international championships. Owing to the cooperation Armenia for the first time hosted four Futures competitions among men and women.


STIGA





## Հայաստանյան լրագրողների միջև սեղանի թենիսի մրցաշարի հովանավորություն

ՎիվաՍել–ՄՏՍ–ը հովանավորեց «Առավոտ» օրաթերթի և «Միր» հեռուստաընկերության նախաձեռնությունը. սեղանի թենիսի՝ տղամարդկանց և կանանց անհատական երրորդ առաջնությունը: Ավանդական դարձած միջոցառմանը մասնակցության հայտ ներկայացրեց 18 լրատվամիջոցի 41 աշխատակից:
ՎիվաՍել–ՄՏՍ–ը բոլոր հաղթողներին պարգևատրեց հատուկ նվերներով:

## Sponsorship of the table tennis tournament among the Armenian journalists

VivaCell–MTS sponsored the Aravot daily and Mir TV initiative – the 3rd table tennis championship among men and women.
41 employees from 18 media outlets applied for participation in this already traditional contest. VivaCell–MTS awarded the winners with special prizes.




ՇԱԽՄԱՏԻ ԱՇԽԱՐ
ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ





## Հայաստանի շախմատի ֆեդերացիայի հովանավորություն

ՎիվաՍել-ՄՏՍ-ն արդեն մի քանի տարի շարունակ ստանձնում է Հայաստանի շախմատի ֆեդերացիայի գլխավոր հովանավորությունը: Հայ շախմատիստների հաջողությունները համաշխարհային մրցաշարերում ապացուցում են, որ հետևողականությունը և կամքը կարող են բերել սպասված արդյունքների:

## Sponsorship of Chess Federation of Armenia

For several years in a row VivaCell-MTS undertakes the general sponsorship of the Chess Federation of Armenia. The success of the Armenian players in international championships proves that consistency and will bring the expected results.




SHARP
NOY
hummel
VIVA





## Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հովանավորություն

Ստանձնելով Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի գլխավոր հովանավորությունը՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ը հավատում է, որ հայրենակիցների աջակցությունն ու խրախուսումը ազգային թիմի համար նորանոր հաջողությունների ձգտելու ամենաhզոր շարժիչ ուժն է:

## Sponsorship of Football Federation of Armenia

By undertaking the general sponsorship of the Football Federation of Armenia, VivaCell-MTS believes that the hand of support and encouragement of compatriots is the best motivation for the national team to strive for more achievements every year.



UJL
Other
















## Բնակարաններ՝ վանաձորցի 20 անօթևան ընտանիքի

Կիսավեր ու խոնավ տնակներում ապրող վանաձորցի 20 ընտանիք ՎիվաՍել–ՄՏՍ–ի շնորհիվ բնակարանամուտ տոնեց նորակառույց շենքում: Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ մատուցված նվերը լավատեսության ուղերձ էր հուսահատության շեմին հայտնված ընտանիքների համար: Նրանք արդեն համոզված են, որ յուրաքանչյուր բացվող առավոտ կարող է կտրուկ փոխել մարդու կյանքը:

## 20 apartments to homeless families in Vanadzor

Owing to VivaCell–MTS 20 families from Vanadzor celebrated house–warming in a newly built apartment bloc. The gift on the occasion of Motherhood and Beauty Day inspired optimism to people on the verge of despair. These people now know – every new morning can radically change one’s life.







## Աջակցություն Չինարի գյուղին՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների կողմից

Սահմանամերձ Չինարիի վաղեմի երազանքն իրականություն է դարձել: Այս գյուղը ջրի խնդիր ուներ խորհրդային տարիներից: ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների ջանքերով լուծված խնդիրը տեղաբնակների խոսքերով «հարազատ հողին կառչած մնալու ամուր հիմքեր է ստեղծել»: Ոչ պակաս կարևոր էր նաև մանկապարտեզի վերանորոգումը և կահավորումը:

## Support to Chinari village by VivaCell-MTS employees

The old dream of the borderland Chinari came true. The water supply was a problem in the village since the Soviet times.
The solution of the problem owing to the efforts made by VivaCell-MTS employees, the locals say, "...created strong grounds to cling to the native land."
Equally important were the repair and equipment of the village kindergarten.












## Գործընկերություն՝ ֆերմերների համահայկական համաժողովի շրջանակում

Հայաստանի առաջատար բջջային օպերատորը 2011–ին դարձավ հայ ֆերմերների առաջին համահայկական համաժողովի գլխավոր գործընկերը:
Գյուղատնտեսության նախարարության կողմից կազմակերպված «Հայագրոֆորումի» եռօրյա աշխատանքները նվիրված էին ոլորտում առկա խնդիրների քննարկմանը, դրանք լուծելու ուղիներին ու զարգացման հեռանկարներին: Ոլորտում առաջին անգամ կազմակերպվող համահայկական համաժողովը փորձի փոխանակման ու փոխշահավետ համագործակցության ուղիներ փնտրելու կարևոր հարթակ դարձավ: Միջոցառման շրջանակներում կազմակերպվեց գյուղատնտեսական ապրանքների ցուցահանդես: Համաժողովի մյուս գործընկերը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն էր:

## Partnership in the frames of the Pan–Armenian Congress of Farmers

In 2011 Armenia's leading mobile operator became the general partner of the first pan–Armenian congress of farmers.
The 3–day works of the Armenian Agricultural Forum organized by the Ministry of Agriculture discussed the problems of the sphere, the ways of their solution as well as the perspectives of development. The first pan–Armenian congress served as a platform for exchange of experience and search for ways of mutually beneficial cooperation. The forum also hosted an agricultural exhibition. Another partner of the congress was the Zangezur copper–molybdenum plant.









## Աջակցություն՝ Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտին ավելի քան հարյուր գրքի ձեռքբերման հարցում

Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի և ՎիվաՍել–ՄՏՍ–ի միջև համագործակցության արդյունքում, ինստիտուտի հավաքածուն համալրվել է արժեքավոր նոր նյութերով և թանգարանային արժեքներով: Ռալֆ Ցիրիկյանի անմիջական աջակցությամբ ձեռք բերված աղբյուրագիտական նշանակության հազվագյուտ միավորները խիստ կարևոր են թանգարանային արխիվն առավել հարստացնելու և նոր ցուցադրություններ կազմակերպելու համար: ՎիվաՍել–ՄՏՍ–ի գլխավոր տնօրենը պարգևատրվեց թանգարան–ինստիտուտին աջակցություն ցուցաբերած բարերարներին տրվող ոսկե մեդալով:

## Support to the Armenian Genocide Museum–Institute in obtaining more than 100 books

As a result of cooperation between the Armenian Genocide Museum–Institute and VivaCell–MTS the institute acquired valuable materials and museum values. The rare entries of high importance will enrich the archive of the institute allowing organization of new exhibitions. VivaCell–MTS General Manager was bestowed with the golden medal of the museum–institute awarded to people supporting the museum.







## Էրեբունի–Երևան տոնակատարությունների հովանավորություն

Համայն հայության մայրաքաղաքի 2793–ամյա տոնակատարությունը նշվեց սեպտեմբերի 21–ին՝ Հայաստանի Հանրապետության Անկախության օրը: Երևանը վաղ առավոտից վերածվեց Վարպետաց քաղաքի՝ արվեստի տարբեր ոճերի մեծ թատերաբեմի: Տոնն ավարտվեց հրավառությամբ: Տոնակատարությունների գլխավոր հովանավորությունը ստանձնեց ՎիվաՍել–ՄՏՍ–ը:

## Sponsorship of Erebuni–Yerevan celebrations

The 2793$^{rd}$ anniversary of the capital of all Armenians was celebrated on September 21$^{st}$ the Independence Day of the Republic of Armenia. From early in the morning the capital was turned into a crafts town – a huge scene for all types of arts, and ended with spectacular fireworks.
VivaCell–MTS undertook the general sponsorship of the event.










## Wi-Fi ինտերնետի ապահովում՝ Երևանի կենդանաբանական այգում

ՎիվաՍել-ՄՏՍ-ի տրամադրած 3.5G ցանցի տեխնիկական հնարավորությունները նպաստում են հասարակության մեջ բնապահպանական խնդիրների շուրջ իրազեկության մակարդակի բարձրացմանը: Երևանի կենդանաբանական այգու այցելուները հնարավորություն ունեն օգտվելու գերարագ անվճար Wi-Fi ինտերնետից, ծանոթանալու բնության բազմազանությանը  և մնալու կապի մեջ՝ աշխարհի հետ: Wi-Fi-ի գործարկման մեկնարկն ապահովում է նաև «Կենդանիների խնամակալություն» ծրագրի լիարժեք իրականացումը: Այն թույլ է տալիս  խնամակալած կենդանուն հետևել համացանցով:

## Provision of Wi-Fi at the Yerevan Zoo

The technical capacities of the 3.5G network provided by VivaCell-MTS facilitate to increasing environmental awareness in the public. Visitors at the Yerevan zoo have an opportunity to use the high speed free Wi-Fi internet to familiarize with the natural diversity and to stay in touch with the world. The launch of the Wi-Fi internet at the zoo will also help fully implement the Animal Care project by allowing trustees to follow the animals they take care through internet.


ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
VIVA cell MTS
VIVA cell MTS








## «Գարնանային ներշնչանք» նախագծի կազմակերպում

«Գարնանային ներշնչանք» նախագիծը մեկնարկեց Երևանի և մարզերի մշակութային ու գեղագիտական կենտրոններում: ՎիվաՍել-ՄՏՍ-ի գործունեության վերաբերյալ իրենց պատկերացումները երիտասարդ շնորհալիներն արտահայտեցին արվեստի տարբեր ձևերի միջոցով. պարարվեստ, երգարվեստ, նկարչություն, ասեղնագործություն, բեմական արվեստ, լուսանկարչություն:
Նրանց ստեղծագործությունները կրում էին թեմատիկ բնույթ և պարունակում էին Հայաստանի առաջատար բջջային օպերատորի կորպորատիվ տարբերանշանը:
Հատուկ հանձնաժողովի կողմից ընտրված աշխատանքները ներկայացվեցին գալա-համերգում և պարգևատրվեցին արժեքավոր նվերներով:

## Organization of Spring Inspiration project

Spring Inspiration project organized among culture and esthetic education centers in Yerevan and the regions of Armenia gave talented young people opportunity to express their perceptions of VivaCell-MTS activities in the preferred type of art: dance, vocal, painting, embroidery, drama, and photography.
The participating works were devoted to a certain topic and included VivaCell-MTS corporate logo.
The works selected by the special jury were presented at the gala-concert and were awarded with valuable prizes.





## «Նա/Նե» ամենամյա մրցանակաբաշխության ուսանողական անվանակարգի հովանավորություն

Ռեպորտաժներ՝ տղամարդկանց և կանանց հավասարության խնդիրների մասին.... Ամփոփվեցին հայաստանյան տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների միջև կազմակերպված «Նա/Նե» ամենամյա երրորդ մրցանակաբաշխության արդյունքները: Մրցութային յոթ անվանակարգերից մեկը՝ «Լավագույն ուսանողական աշխատանքը» սահմանել էր ՎիվաՍել–ՄՏՍ–ը:

## Sponsorship of the Na/Ne Award student nomination

Stories on problems of equality of men and women... The results of Na/Ne 3rd annual award between print and broadcast mass media were announced. The best Student Work – one of the seven nominations – was established by VivaCell–MTS.



## Բովանդակություն
## Contents


9 **Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ**
**Information and Communication Technologies**

11 Եռակողմ հուշագիր՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի, «Սինոփսիս Արմենիայի» և «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջև
Trilateral Memorandum Signed between VivaCell-MTS, Synopsys Armenia and Hayastan All-Armenian Fund

13 «ԱրմԹեք» համաժողովի հովանավորություն
Sponsorship of the ArmTech Congress

15 «ՏՏ ոլորտում լավագույն մենեջեր» մրցանակի հովանավորություն
Sponsorship of the Best IT Manager Award

17 Միկրոէլեկտրոնիկայի օլիմպիադայի հովանավորություն
Sponsorship of the Microelectronics Olympiad

19 «Դիջիթեք» ցուցահանդեսի հովանավորություն
Sponsorship of the Digitec Expo

21 Հայաստանի ռոբոտների բաց առաջնության հովանավորություն
Sponsorship of Armenian Robots Open Championship

23 **Մշակույթ**
**Culture**

25 Լիլիթ Պիպոյանի համերգի հովանավորություն
Sponsorship of Lilit Pipoyan concert

27 Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հովանավորություն
Sponsorship of the State Youth Orchestra of Armenia

29 «Վերադարձի» դասական երաժշտության փառատոնի հովանավորություն
Sponsorship of the Return Classical Music Festival

31 «Նոր անուններ» փառատոնի հովանավորություն
Sponsorship of the New Names Festival

33 «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հովանավորություն
Sponsorship of the Golden Apricot International Film Festival

35 Պատկերապատման միջազգային փառատոնի հովանավորություն
Sponsorship of the International Comics Festival in Armenia

37 «Ազգային պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոնի հովանավորություն
Sponsorship of the National Gallery International Music Festival

39 Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հովանավորություն
Sponsorship of the State Philharmonic Orchestra of Armenia

41 Գյումրիի «Վերածնունդ» միջազգային երաժշտական փառատոնի հովանավորություն
Sponsorship of the Renaissance Gyumri International Music Festival

43 Աջակցություն՝ «Սպեղանի» երգչախմբին
Support to Speghani choir

45 **Կրթություն**
**Education**

47 Համագործակցություն՝ «Խոսենք հայերեն» մշակութային քարոզարշավի շրջանակում
Partnership in the frames of Let's Speak Armenian campaign

49 Համագործակցություն Հայաստանի 36 բուհի հետ / Բաց դռների օրեր դպրոցականների համար՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակում
Cooperation with 36 universities of Armenia / Open Door days for schoolchildren at VivaCell-MTS headquarters

51 Dasaran.am կայքի ստեղծման հովանավորություն
Sponsorship of Dasaran.am website

53 Եռակողմ հուշագիր՝ ապագա մասնագիտացման հարցում երիտասարդներին կողմնորոշելու համար
Trilateral memorandum to support in professional orientation of the young people

55 Համագործակցություն՝ «Մանկապատ» նախագծի շրջանակում
Partnership in the frames of the Kinderwall project

57 Աջակցություն՝ եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում կապի միջոցների, միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգերի ամբիոնի բացմանը
Support in opening Department of Communication Means, Microelectronic Circuits and Systems at the European Regional Educational Academy

59 Հայաստանի բուհերի 150 ուսանողի կրթաթոշակի տրամադրում
Support with tuition fee to 150 students of the universities of Armenia

61 **Շրջակա միջավայրի պաշտպանություն**
**Environmental Protection**

63 Մասնակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տարածքում կազմակերպված ծաղիկների հավաքման միջոցառմանը
Participation in flower gathering event on the territory of the Armenian Genocide Museum-Institute organized by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

65 Մասնակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ Եռաբլուրի հուշահամալիրի տարածքում կազմակերպված ծառատունկին
Participation in stone gathering event on the territory of the Yerablur organized by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

67 Աջակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից Երկրի օրվան նվիրված միջոցառումների կազմակերպմանը
Support in organization of Earth Day celebrations by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

69 Աջակցություն՝ բնապահպանական թեմայով էսսեների մրցույթի կազմակերպմանը
Support in organization of the Environmental Essay Competition

71 Աջակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ նկարչական օրվա կազմակերպմանը
Support in organization of Painting Day by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

73 Աջակցություն՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի նախաձեռնությամբ «Արևորդի» միջազգային բնապահպանական փառատոնի կազմակերպմանը
Support in organization of the SunChild International Environmental Festival organized by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

**75 Առողջապահություն**
**Healthcare**

77 Հայաստանում բժշկական միջազգային կոնգրեսի հովանավորություն
Sponsorship of the International Medical Congress of Armenia

79 Հայաստանում բուժքույրական միջազգային կոնգրեսի հովանավորություն
Sponsorship of the International Nursing Congress in Armenia

81 Համագործակցություն «BirthLink» ՀԿ հետ՝ ծննդատների և մանկական բաժանմունքների համար նորածնային խնամքի սարքավորումների ձեռքբերման գործում
Partnership with BirthLink NGO in equipping maternity hospitals and neonatal care departments

83 Աջակցություն աուտիզմով տառապող երեխաների կրթավճարի ապահովմանը՝ Երեխաների զարգացման հայաստանյան կենտրոնի հետ համատեղ
Support in covering tuition of children suffering autism in partnership with the Armenian International Child Development Center

85 Աջակցություն՝ Երևանում շտապօգնության մեքենաների վերազինման նախաձեռնությանը
Support in equipping emergency cars in Yerevan

87 Համագործակցություն՝ Հայաստանի կարմիր խաչի ընկերության հետ
Partnership with the Armenian Red Cross Society

**89 Սպորտ**
**Sport**

91 «Հատիս Երևան» բասկետբոլային ակումբի հովանավորություն
Sponsorship of the Hatis Yerevan basketball club

93 Հայաստանյան լրագրողների միջև մինի-ֆուտբոլի մրցաշարի հովանավորություն
Sponsorship of the mini-football tournament among the Armenian journalists

95 «Ուլիս» ֆուտբոլային ակումբի հովանավորություն
Sponsorship of the Ulysses football club

97 Հայաստանի թենիսի ֆեդերացիայի հովանավորություն
Sponsorship of the Tennis Federation of Armenia

99 Հայաստանյան լրագրողների միջև սեղանի թենիսի մրցաշարի հովանավորություն
Sponsorship of the table tennis tournament among the Armenian journalists

101 Հայաստանի շախմատի ֆեդերացիայի հովանավորություն
Sponsorship of Chess Federation of Armenia

103 Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հովանավորություն
Sponsorship of Football Federation of Armenia

**105 Այլ**
**Other**

107 Բնակարաններ՝ Վանաձորի 20 անօթևան ընտանիքի
20 apartments to homeless families in Vanadzor

109 Աջակցություն Չինարի գյուղին՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների կողմից
Support to Chinari village by VivaCell-MTS employees

111 Գործընկերություն՝ ֆերմերների համահայկական համաժողովի շրջանակում
Partnership in the Frames of the Pan-Armenian Congress of Farmers

113 Աջակցություն՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին ավելի քան հարյուր գրքի ձեռքբերման հարցում
Support to the Armenian Genocide Museum-Institute in obtaining more than 100 books

115 Էրեբունի-Երևան տոնակատարությունների հովանավորություն
Sponsorship of Erebuni-Yerevan celebrations

117 Wi-Fi ինտերնետի ապահովում՝ Երևանի կենդանաբանական այգում
Provision of Wi-Fi at the Yerevan Zoo

119 «Գարնանային ներշնչանք» նախագծի կազմակերպում
Organization of Spring Inspiration project

121 «Նա/Նե» ամենամյա մրցանակաբաշխության ուսանողական անվանակարգի հովանավորություն
Sponsorship of the Na/Ne Award Student nomination

**Լուսանկարներից մի քանիսը`** «PanARMENIAN Photo»
և «ՖոտոԼուր» գործակալությունների
**Some of the photos by** PanARMENIAN Photo and
PhotoLure agencies

**Տպագրված է** «Լիմուշ» տպարանում
**Printed at** Limush printing house



Կորպորատիվ պատասխանատվություն

# Corporate Responsibility

ՎիվաՍել-ՄՏՍ-ը՝ Հայաստանին

VivaCell-MTS to Armenia

**2011**


ՎիվաՍել-ՄՏՍ
«Կ-Տելեկոմ» ՓԲԸ

Արգիշտի փողոց 4/1, Երևան 0015, ՀՀ
**Հեռ.** +37410 568777, +37493 568777
**Ֆաքս.** +37410 569222, +37493 569222
www.vivacell.am, info@vivacell.am

4/1 Argishty Street, Yerevan 0015, RA
**Tel.:** +37410 568777, +37493 568777
**Fax:** +37410 569222, +37493 569222
www.vivacell.am info@vivacell.am